

ՄԱՆԿԱԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ



ՈՍԿԻ ԶԿՆԻԿ

ԿԱԹՈՒԼ ՄԸ ՄԵՂԸ

ՍԱՏԱՆՍՅԻՆ ԵՐԵՔ  
ՈՍԿԵՄԱԶԵՐԸ



891.715  
7-97

թիի 23

ԳՈՒԲՐԵՆ

1936

ԼԵՅ

10



# „MASIS“

SOCIETATE ANONIMA DE EDITURA

CAPITAL SOCIAL LEI 500.000

SEDIUL — BUCUREȘTI — B-dul MARIA No. 8 Etaj II

ԾՆՈՂՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ.

«ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ»ը լրացուց իր Ա. վեցամսեան, յոյս սեսած են 12 հասոր գրքեր 24 պատմութեանով, 400 էջերու մէջ, ընտիր բուրժի վրայ եւ պատկերազարդ: Գինը խիստ ատան նշանակուած է, ամէն ընթացիկի մասշտիպի դարձնելու ցանկութեամբ:

Կը խնդրուի փակել առաջին վեցամսեայի հաշիւները, որկէտով փոխարժէքը:

ԲԱՅՈՒԱԾ Է ԵՐԿՐՈՐԴ ՎԵՅԱՄՍԵԱՅԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹԻՒՆԸ: Պայմաններ՝

|                  |         |       |
|------------------|---------|-------|
| Ռումանիոյ համար  | Լէյ     | 110.— |
| Պուլկարիոյ համար | Լէվա    | 80.—  |
| Ֆրանսայի համար   | Ֆր. Ֆր. | 15.—  |

Գործակալներու համար մասնաւոր զեղջ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԱՉԴ

Շուտով կը լրանայ մանկական գրադարանի Ա. տարին: Բոլոր գործակալներէն կը խնդրենք անյատպող կարգադրել իրենց հաշիւները, փութացնելով առնուազն Ա. վեցամսեայի իրենց հաշիւները: Անոնք որ չպիտի փակեն իրենց հաշիւը մինչև 24րդ թիւը, Բ. տարուան Ա. թիւէն պիտի դադրեցնենք առաքումը:

Կը փնտռենք եռանդուն գործակալներ հարաւային և հիւսիսային Ամերիկաներու համար:

\* \* Կը խնդրենք մեր բաժանորդներէն փոխադրութեան պարագային իմացնել մեզ իրենց նոր հասցէն: 20րդ թիւէն քանի մը հատ ետ եկաւ բաժանորդը փոխադրուած ըլլալով:

Տպարան «Աստորիա»

București, Tipografia „ASTORIA” Pictor Luchian No. 14 Tel. 4.38.25

891.715

7-97

«ՄԱՍԻՍ» Ռ-ՀԱՅ ՀՐԱՏ. ԱՆԱՆ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԹԻՒ 23

Ա. ՊՈՒՇԿԻՆ

ՈՍԿԻ ԶԿՆԻԿ

ԿՐԻՄ ԵՂՐԱՅՐՆԵՐ

ՍԱՏԱՆԱՅԻՆ ԵՐԵՔ  
ՈՍԿԵՄԱԶԵՐԸ

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԿԱԹԻԼ ՄԸ ՄԵՂՐ



Տպարան «Աստորիա» Ե. Սարգսեանի

Բիբաւր Լուսիան 14

Պ u l f r e o


1936

23 JUL 2013

4868

2011-05

*Համար 58  
11.07.1995  
26/07/14  
Մարտի  
Մարտի 5  
Կա զեղծում*



# ՈՍԿԻ ՁԿՆԻԿ

Ա. ՊՈՒՇԿԻՆ



Ա.

Ծերուկ ձկնորս մը և իր պառաւ կին  
Կը բնակէին մեծ ծովի ափին .  
Ծերունին կ'երթար ձուկ բռնէր ծովէն ,  
Պառաւն ալ տունը թել մանէր բրդէն :  
Այսպէս միասին՝ մէջն հին գետնատան  
Ճիշտ երսուներեք տարի ապրեցան :

Ահա օր մըն ալ ծերը գնաց ծով ,  
Որ ձուկը որսայ իր մաշած ցանցով .  
Ան ուրախ ուրախ ցանցը ծով ձգեց ,  
Բայց ցանցն այս անգամ միայն տիղմ հանեց .  
Երկրորդ անգամ երբ ցանցը ձգեց ծով ,  
Ցանցը դուրս եկաւ ծովային խոտով :

Հանրապետական գրադարան  
Гос. Библиотека  
ՀԱՍՏՈՒ-ԱՐՄ ՍՍՐ  
Ս. ՄԱՐՏԻ  
6382567

Իսկ երրորդ անգամ երբ ցանցը ձգեց,  
Ո՞վ կրնայ ըսել, թէ ի՞նչ դուրս հանեց:  
Ան բերաւ իր հետ ոսկի մէկ ձկնիկ՝  
Ձկանց արքային դուստրը գեղեցիկ:  
Ծերին ցանցն ինկաւ իբրև խեղճ գերի,  
Ոսկի աղջիկը ձուկ-թագաւորի:  
Խեղճ ոսկի ձկնիկ. ինչպէ՛ս կը խնդրէ,  
Մարդկային լեզուով ծերին կ'աղաչէ.  
«Թո՛ղ զիս, թո՛ղ ծերուկ, թո՛ղ զիս անվտանգ,  
Քեզ կը վճարեմ թանկագին փրկանք:  
Ի՞նչ որ սիրտդ ուզէ, ի՞նչ որ կամենաս  
Ճշմարիտ կ'ըսեմ, ինձմէ կը ստանաս»:

Վախցաւ ծերուկը. մնաց զարմացած:  
Ինք այնքան տարի ձկնորս էր եղած,  
Բայց ձկան մասին երբեք լսած չէր  
Թէ ան մարդու պէս խօսիլ կարող էր:

«Գնա՛, Տէր ընդ քե՛զ, ըսաւ ծերունին,  
Ինձ հարկաւոր չէ փրկանք թանկագին.  
Գնա՛. քեզ համար դու ծիրանի ծով,  
Ու այնտեղ ապրէ ազատ, ապահով»:

Բ.

Այս դէպքէն յետոյ ծերը տուն դարձաւ,  
Պատմեց պառաւին՝ թէ ինչ բան տեսաւ.  
«Այսօր ես ծովէն, գիտե՞ս ինչ, կը՛նիկ,  
Բռնեցի յանկարծ մէկ ոսկի ձկնիկ.  
Ոսկի կ'ըսեմ ես և ո՛չ քու գիտցած,  
Այսպիսի հրաշք ոչ ոք չէ տեսած:  
Ան խօսիլ գիտէր ճիշտ մեր լեզուով,  
Աղաչանք ըրաւ, որ յետ ձգեմ ծով».

«Թո՛ղ ըսաւ, խնդրեմ, թող զիս անվտանգ,  
Քեզ կը վճարեմ թանկագին փրկանք»:  
Բայց ես ոչ մէկ բան չըպահանջեցի,  
Ոչինչ չեմ ուզեր, գնա՛, ես ըսի,  
Գնա՛ քեզ համար դու ծիրանի ծով,  
Ու այնտեղ ապրէ ազատ, ապահով»...

Պառաւը երբ որ այս բանը լսեց,  
Խեղճ ալևորը շատ յանդիմանեց.  
Թէ ինչո՞ւ ձուկէն փրկանք չէ ուզեր,  
Ու այսպէս ձրի լետ ծովն է ձգեր:  
«Այ յիմար անմիտ, հայհոյեց ծերին,  
Գոնէ կ'ըսէիր դուն ոսկի ձուկին՝  
Նոր տաշտակ մը տուր, կնկանս տանիմ,  
Մերը կոտրած է, ալ չէ պիտանի»...

Դարձաւ ծերունին ծովափը գնաց.  
(Տեսաւ նա ծովը մեղմիկ ծածանած):  
Ըսկաւ կանչել ոսկի ձկնիկին.  
Չուկը՝ լողալով մօտեցաւ ծերին.  
«Ի՞նչ կը փափաքիս ծերուկ» հարցուց ան,  
Խոնարհեցաւ ծերն ու տուաւ պատասխան.  
«Ողորմած ըլլաս թագունի-Ձկնիկ.  
Ձիս կը նախատէ իմ պառաւ կնիկ,  
Հանգիստ չըթողուր խեղճ ալևորիս,  
Կը մըթմըթայ վրաս, ու կ'անարգէ զիս,  
Նոր տաշտակի մը պէտք ունի անի,  
Մերը կոտրած է ալ չէ պիտանի»...

Ոսկի ձկնիկը ծերին մեղքացաւ  
«Գնա, Տէր ընդ քե՛զ, մի՛ տխրիր ըսաւ.  
Թող քու պառաւը շատ չընեղանայ.  
Այսօր նա մէկ նոր տաշտակ կ'ունենայ»...

Ետ դարձաւ ծերը դէպի իր տընակ,  
 Տեսաւ կնկան մօտ մէկ սիրուն տաշտակ.  
 Բայց կինը գոհ չէր. ու այս անգամ ալ  
 Ըսկսաւ ծերին սաստիկ նախատել:  
 «Գացի՛ր դուն, անխելք, տաշտակ ուզեցիր,  
 Ատկէ մեզ ի՞նչ շահ: Նորէն ետ դարձիր  
 Ոսկի ձկան մօտ, ա՛յ դուն անասուն,  
 Գրլուխ խոնարհէ և ուզէ մէկ տուն»...

Ծերունին դարձաւ ծովափը գնաց.  
 (Այս անգամ տեսաւ ծովը պղտորած)  
 Ըսկսաւ կանչել ոսկի ձկնիկին,  
 Չուկը լողալով մօտեցաւ ծերին.  
 «Ի՞նչ կը փափաքիս, ծերուկ» հարցուց ան,  
 Խոնարհեցաւ ծերն ու տուաւ պատասխան.  
 «Ողորմած ըլլաս, Թագունի-Չկնիկ,  
 Ձիս շատ նախատեց իմ պառաւ կնիկ.  
 Խեղճ ալևորիս հանգիստ չձգեր  
 չիմա ալ կատղեր՝ ու տուն մը կ'ուզէ»...

Ոսկի ձկնիկը ծերին մեղքացաւ.  
 «Գնա՛, Տէր ընդ քեզ, մի տխրիր ըսաւ.  
 Թող ըլլայ այնպէս՝ ինչպէս կամենաք,  
 Դուք ձեր ցանկացած տունն ալ կ'ունենաք»...

Ծերը ետ դարձաւ կրկին դէպի տուն՝  
 Ու ալ չգտաւ իր հին գետնատուն.  
 Նոր տուն մը տեսաւ լուսամուտներով,  
 Տանիքէն ելած ծխնելոյզներով,  
 Պատ ու վառարան մաքուր մը ծեփուած,  
 Կիրով, կաւիճով սպիտակացած.

Վարպետի տաշած, կաղնի տախտակէն,  
 Մեծ դունն էր կախուած լայն բակին կողմէն:

Պատուհանին տակ կինն ուռած նստեր,  
 Իր շարութենէն ան պայթիլ կ'ուզէր.  
 Ի՞նչ անէ՞ծք որ կար աշխրհի երեսին,  
 Բոլորն ալ թափեց խեղճ մարդուն գլխին.  
 Վերջը երբ քիչ մը բարկութիւնն իջաւ,  
 Մոռթը կախած՝ ծերուկին դարձաւ.  
 «Անշնորհք ծերուկ, տնա՛կ ուզեցիր,  
 Կ'երևի քու մէջ մեծ բան կարծեցիր.  
 Ե՛տ դարձիր, անխելք, ե՛տ դարձիր խօսէ,  
 Ոսկի ձկնիկին իմ կողմէն ըսէ,  
 Որ ալ չեմ ուզեր մնալ գեղջուկ կին,  
 Ես կ'ուզեմ ըլլալ գերագնիւ տիկին»...

Ծերունին դարձեալ ծովափը գնաց.  
 (Այս անգամ տեսաւ ծովը վըրդոված)  
 Ըսկսաւ կանչել ոսկի ձկնիկին,  
 Չուկը լողալով՝ մօտեցաւ ծերին.  
 «Ի՞նչ կը փափաքիս, ծերուկ» հարցուց ան.  
 Խոնարհեցաւ ծերն ու տուաւ պատասխան.  
 «Ողորմա՛ծ ըլլաս, Թագունի Չկնիկ,  
 Հանգիստ չըտար ինձ, ո՛հ, իմ շար կնիկ,  
 Այ չի կամենար մնալ գեղջուկ կին,  
 Կ'ուզէ որ ըլլայ գերագնիւ տիկին,  
 Չեմ գիտեր գլուխն ի՞նչ քամի մտաւ,  
 Որ գեղջիկութենէ յանկարծ ձանձրացաւ»...

Ոսկի ձկնիկը ծերին մեղքացաւ  
 «Գնա՛, Տէր ընդ քեզ, մի տխրիր ըսաւ.

Թող քու պառաւդ այ այսօրուանէն ,  
Ազատ նկատուի իր գեղջկութենէն»... .

Ետ դարձաւ ծերը , և ի՛նչ կը տեսնայ ,  
(Կարծես ցնորք է աչքին կ'երևայ)  
Հոյակապ տուն մը , վերնասրբահին  
Պառաւն է կիցեր , հպարտ տանտիկին .  
Հագած է սամոյր բաճկոնակ սիրուն ,  
Գլխուն զիպակէ շրդարշ գոյնգգոյն ,  
Վիզը պարզարուած մարգարիտներով ,  
Մատներուն մատնի՛ անգին քարերով .  
Մաշիկներն ինչպէս կաս-կարմիր որդան ,  
Միւս հագուստներն այ մետաքս պատուական :  
Ծառաներ ունի մէկ քանի տեսակ  
Բոլորն այ իրեն հլու հպատակ :

Կատղեցաւ պառաւն՝ էրիկն երբ տեսաւ ,  
Խեղճ ծառաները ծեծել ըսկրսաւ .  
(Կ'երևի ուզեց ցոյց տալ իր մարդուն ,  
Թէ ինքն այժմ է գերագնիւ տիկին) :  
Հայհոյանք թափեց ամէնուն վրայ ,  
Տեղի անտեղի յաղկեց անխընայ .  
Մէկուն մագերէն բունեց քաշքրշեց  
Միւսին ըսես լաւ մը ապտակեց :

Ծերը մօտեցաւ զողզոջ քայլերով՝  
Ըսաւ պառաւին , հեզ՝ խոնարհելով ,  
«Բարե՛ւ գերագնիւ խանրմ-խաթունիս  
Այ հիմա գո՛հ ես , հանգի՛ստ կը լինես»... .

Այնպէս մը պոռաց տիկինը պառաւ ,  
Որ խեղճ ծերուկին լեղին պատռեցաւ .  
Հրամայեց անոր որ խակոյն երթայ

Գոմն աւլէ , քերէ , ու այնտե՛ղ մնայ :

Ե .

Մէկ երկու շաբաթ հազիւ թէ անցաւ ,  
Պառաւ տիկինը նորէն կատղեցաւ .  
«Շուտ կ'ընես կ'երթաս , կ'ըսէ ծերուկին ,  
Ու իմ կողմանէ կ'ըսես ձկնիկին :  
Թէ ես չեմ ուզեր տիկնութիւն ընել .  
Կ'ուզեմ ես ազատ թագուհի լինել»... .

Այս խօսքին վրայ ծերունին վախցաւ ,  
Աղաղակելով պառաւին ըսաւ .  
«Խենթեցե՞ր ես կին , չեմ հասկնար ես .  
Ի՞նչ կը փափաքիս , արդեօք դու գիտե՞ս .  
Մէկ մը վրադ նայէ , շէնք ու շնորհքիդ ,  
Շատախօս լեզուիդ , ծուռ ու մուռ քայլիդ ,  
Ըսէ՛ , ի՛նչ ունիս թագուհու վայել  
Որ խելքիդ այդպէս քամի է փչեր .  
Եկո՛ւր , լըսէ՛ զիս , մի՛ ըներ այդպէս ,  
Ամբողջ աշխարհքը կը խնդացնես»... .

Այ չըհամբերեց մեր պառաւ տատը ,  
Որ վերջացնէր մարդն իր խրատը .  
Ան այնպէս պոռաց , այնպէս որոտաց ,  
Որ ամբողջ տունը հիմնովին թնդաց .  
«Ինչպէ՛ս թէ այդպէս , յանդուգն ըստահակ» ,  
Գոչեց ու զարկաւ մէկ ուժգին ապտակ ,  
Կը համարձակի՞ս , գոեհի՛կ անգէտ ,  
Վիճիլ ինձ նման ագնիւ տիկնոջ հետ .  
Քեզ կը հրամայեմ պատուաւոր խօսքով ,  
Որ խակոյն երթաս քու յօժար կամքով ,  
Եթէ ոչ անա հաւաքուած կողքիդ

Ասոնք կը տանին դարնելով վիզիդ»:

Ծերունին դարձեալ ծովափը գնաց .  
(Այս անգամ տեսաւ ծովն ամբողջ սևցած):  
Ըսկաւ կանչել ոսկի ձկնիկին,  
Ձուկը լողալով մօտեցաւ ծերին:  
Ծերը խոնարհած՝ տուաւ պատասխան .  
«Ողորմած ըլլաւ, Թագունի-Ձկնիկ,  
Նորէ՛ն կը կըռուի, իմ պառաւ կնիկ .  
Ներէ՛ ինձ, խնդրեմ, ո՛հ, կ'ամչնամ ես,  
Նոր ուզածն ըսել իմ չար պառաւիս:  
Բայց ո՞ր ջուրն իյնամ, հանգիստ չի՛ թողուր,  
կրակն է ձգեր, կ'այրէ զիս ի գուր .  
Գնա՛, կ'ըսէ նա, — ա՛խ նզովեալ կին —  
Շո՛ւտ գնա ըսէ՛ ոսկի ձկնիկին,  
Որ ալ չեմ ուզեր տիկնութիւն ընել,  
Կ'ուզեմ ես ազատ թագունի լինել»... .

Ոսկի ձկնիկը ծերին մեղքացաւ .  
Գնա՛, Տէր ընդ քեզ, մի՛ տխրիր, ըսաւ .  
Թող քու պառաւիդ ուզածը ըլլայ,  
Թող երթայ ազատ թագունի դառնայ»... .

## 2.

Ո՞վ կրնայ պատմել, թէ ծերն ի՞նչ տեսաւ,  
Երբ ձկան քովէն տուն վերադարձաւ:  
Այ ի՞նչ տուն, ի՞նչ բան, դու արքայական  
Ապարանք ըսէ, կամ հսկայական  
Մեծ-մեծ պալատներ շարիշար կանգնած՝  
Բարձր բուրգերով չորս կողմը պատած .  
Շքեղ դահլիճներ, անթիւ սենեակներ,  
Եթէ մէջն իյնար մարդ կը շուարէր:

Ծերը բարձրացաւ սանդուխէն մարմար,  
Դահլիճ մը մտաւ, խիստ խոնարհաբար .  
Նոր տեսարան մը առջին բացուեցաւ,  
Երբ այնտեղ գտաւ իր կինը պառաւ:  
Ան հիմա ազատ թագունի դարձած՝  
Առօր ու փառօր ճաշի է նստած .  
Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու պէկեր,  
Ոտքի են կեցած որպէս ծառաներ,  
Թագունւոյն համար կը լեցնեն զինին,  
Ու վախով աչքին-ունքին կը նային .  
Սեմին կեցեր են անեղ զինուորներ,  
Ուսերնուն բռնած կացնաձև սուրեր:  
Մինակ պառաւն էր բազմած սեղանին,  
Ո՞վ կը յանդգնէր նստիլ միասին .  
Բայց կերակուրներն այնքան շատ էին,  
Որ հարիւր հոգի կը կշտացնէին:  
Եւ քանի՛ ուրիշ անձանօթ բաներ,  
Ի՛նչ անուշեղէն, ի՛նչ տապակածներ... .  
Պառաւը կ'ուտէր մեծ ախորժակով,  
Գինին կը դարտկէր լեցուն բաժակով,  
Վերջն ալ մեղրահաց կերաւ բաւական,  
Որ քաղցրացնէ իր գուշիկ(\*) բերան:

Ծերն այս տեսնելով շատ շփոթեցաւ .  
Ինկաւ պառաւին ոտքերն ու ըսաւ .  
«Բարո՞վ քեզ, բարո՞վ, անեղ թագունի,  
Քու մեծութիւնդ յաւիտեա՛ն լինի»:  
Այս խօսքէն յետոյ շրջնչեց կամաց,  
Ու հարցումներն այս պառաւին փափաց:  
«Հիմա որ բախտին դուն վերի ծայրն ես,  
Այլևս գո՞հ ես, կընիկ, ի՞նչ կ'ըսես»... .

(\*) Ծերութեան ծնօցը դէպի բերանը ծռած:

Թագուհի դարձած պառաւն այս անգամ  
էրկանը կողմն իսկ չըզարձաւ անգամ .  
Հրաման մոմոաց տակէն իր քիթին ,  
Որ դուրս վրոնտեն մեր անկոչ հիւրին :  
Հէնց որ լսուեցաւ Թագուհւոյն հրաման ,  
Ամէնքն հնազանգ երևալ ցանկացան .  
Մեծ-մեծ իշխաններ , խաներ ու պէկեր ,  
Ինչպէս որսորդի արնախում շուներ ,  
Զարնելով ծերին գլխուն ու վզին ,  
Շքեղ դահիճէն դուրս վրոնտեցին .  
Պահապաններն ալ սեմին վրայ կանգնած  
Իրենց կացիներն էին պատրաստած ,  
Վրայ վազեցին ամէնքը մէկէն ,  
Ու քիչ մնաց որ խեղճը խողխողեն :  
Ինչպէս որ եղաւ , կերպ մը դուրս պրծաւ .  
Դուրսն ալ ամբոխին ծաղրին տակն ինկաւ .  
Որ կարծես կեցած իրեն կը սպասէր ,  
Ցեխոտ փողոցին մէջ ուր՝ կ'անձրևէր :  
— «Մի , ինչ լաւ ըրին , ծերո՛ւկ դուն անգէտ ,  
Որո՞ւն հետ նետես անձոռնի ոտներդ .  
Թող այդ քեզ համար ըլլայ լաւ խրատ .  
Որ ալ չըցանես մանր կտաւհատ» . . .

է .

Այս դէպքէն ետքը շատ օրեր չանցան ,  
Պառաւին այծերը նորէն եկան .  
Ուզարկեց իսկոյն իր իշխանները ,  
Որ գտնեն բերեն արտաքսուած ծերը :  
Եկաւ ծերունին : Պառաւն սկսաւ .  
«Դուն պէտք է երթաս ձուկին մօտ ըսաւ .  
Կ'երթաս անոր կը խոնարհիս նորէն  
Ու իմ փափաքս կը յայտնես իրեն .

Կ'ըսես՝ չեմ ուզեր մնալ Թագուհի ,  
Ես կ'ուզեմ ըլլալ ծովու տիրուհի .  
Կ'ուզեմ ես Ովկիան ծովին մէջ մնալ  
Ոսկի ձկնիկը ծառայ ունենալ ,  
Որ պատրաստ ըլլայ իմ հրամանին ,  
Իսկոյն կատարէ ինչ որ ես կամիմ» . . .


Ծերունին դարձեալ ծովափը գնաց .  
(Այս անգամ ծովը խիստ էր փոթորկած ,  
Փրփրած ալիքներ սարեր դառնալով՝  
Իրար զարնուէին ասեղ գոռալով) .  
Ողբաձայն կանչեց ոսկի ձկնիկին ,  
Զուկը՝ լողալով մօտեցաւ ծերին .  
«Ի՞նչ կը փափաքիս ծերուկ» հարցուց ան ,  
Ծերը բարևեց՝ տուաւ պատասխան .  
«Ողորմած ըլլաս , Թագուհի-Չկնիկ ,  
Իսպառ խենթեցեր է իմ պառաւ կնիկ .  
Ի՞նչ ընեմ արդեօք այդ նզովեալին ,  
Մինչև ե՞րբ տանջուիմ խոֆածի ձեռքին .  
Ալ չի կամենար Թագուհի լինել ,  
Տես անիծածը ինչ է մտածեր .  
Ան կ'ուզէ իշխել բոլոր ջրերուն  
Եւ իշխանուհի դառնալ ծովերուն .  
Կ'ուզէ Ովկիանոս ծովին մէջ մնալ  
Ոսկի ձկնիկը ծառայ ունենալ ,  
Որ իր հրամանին միշտ պատրաստ կենաս ,  
Ու ինչ որ ուզէ շուտ կատարել տաս» . . .

Ոսկի ձկնիկը լուռ ու մունջ լսեց ,  
Բայց ալ ծերուկին չպատասխանեց :  
Զուրին երեսը մտրակեց պոչով  
Ու անցաւ , գնաց դէպի խորունկ ծով . . .  
Շատ մնաց ծերը և շատ նայեցաւ ,

Բայց ոսկի ձկնիկը ալ չերևցաւ .  
Դարձաւ գլխիկոր որ կնկան յայտնէ ,  
Թէ ի՞նչ փորձանքի մէջ զինք ձգեր է :

Եւ գնաց , տեսաւ . . . (Բայց ի՞նչ տեսնէ լաւ ,  
Որ արդար ըլլայ և ոչ անիրաւ) .  
Հին հիւղին սեմին պառաւը նստած ,  
Կոտրած տաշտակը առջևը ինկած . . .

Ազատ թրգմ. Ղ. ԱՂԱՅԵԱՆ



## ԿԱԹԻԼ ՄԸ ՄԵՂՐ

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

1.

Գիւղացի մը խանութ բացեր  
իր գիւղին մէջ բան կը ծախէր :  
Օրին մէկը մօտիկ գիւղէն ,  
մահակն ուսին , շունը քովէն ,  
հսկայ հովիւ մը ներս մտաւ :  
— Բարև ըսաւ ա՛ , խանութպան  
մեղր չունի՞ս տաս քիչ մը բան :  
— Բարի՛ եկար ,  
հովի՛ւ աղբար ,  
մեղրը ըլլայ փնտռածըդ ,  
ամանն ո՞ւր է , բե՛ր ամանըդ ,  
ուրտեղէն որ ինքդ հաւնիս ,  
կտրեմ ու տամ այդ վայրկեանիս :



Այսպէս սիրով,  
անուշ բերնով  
կը խօսէին,  
կը կշռէին,  
Երբ որ յանկարծ  
կաթիլ մը մեղր ծորեցաւ ցած:

2.

Տը՛ղզ. անդիէն ճանճ մը եկաւ  
ու կաթիլին վրայ ինկաւ:  
Իսկ խանութին տիրոջ կատուն  
աչքը ճանճին՝ անցաւ թաքուն  
մօտով, մօտով,  
զարկաւ թաթով:  
Բայց ճիշտ կատուն ցատկելուն հետ  
հովուի շունը իսկոյն կեթ  
հաֆ մը ըրաւ,  
վրայ թռաւ,  
կատուն բռնեց,  
կոխեց տակը,  
խածաւ, խեղդեց,  
մէկդի նետեց:


3.

«Խեղդե՛ց, խեղդեց, շա՛ն որդի շուն.  
վա՛յ իմ կատուս. հա՛յ սատկիս դուն»  
կատոցեցաւ մեր խանութպանը  
ու ձեռքն ինկած առջի բանը  
տո՛ւր թէ կու տաս շանը ճակտին,  
կատուն քովը դրաւ գետին:  
«Վա՛յ ապրուստս, առիւծ շո՛ւնս

վա՛յ աւրեցաւ տեղս, տունս.  
տունդ աւրի, ա՛յ խանութպան,  
անխիղճ, լիրբ, չար, անգութ գազան  
ինչպէ՞ս, դուն իմ շունս զարնե՞ս:  
դէ՛ զարնելը, ա՛ն, հիմա տես.»  
գոռաց մեր բիրտ աժտահակը,  
մեծագլուխ իր մահակը  
որ չիջեցուց անոր դէմքին,  
խանութպանը փոեց շէմքին:

4.

«Սպաննեցին... հա՛յ օգնութի՛ւն...»



ու թաղէ թաղ ու տունէ տուն  
ձայն կու տային մէկը միւսին,  
ձայն կու տային, կը վապէին:  
Վերի թաղէն, վարի թաղէն,  
ճամբաներէն, գործի տեղէն,  
լալով, ճիշով,  
ու վայ տալով,  
ու հայր ու մայր,

63825-67



քոյր ու եղբայր,  
կին, երեխայ,  
ընկեր տղայ,  
զոքանչ, աներ,  
քաւոր, հարսներ,  
քեռի, փեսայ,  
այ ի՞նչ գիտնաս՝  
թէ ով է սա,  
կու գան, կու գան,  
մարդուն վրան:

— Ծօ՛, կոպիտ արջ, ծօ՛, ամեհի՛,  
ա՛յս տեսակ այ բան պատահի.  
դուն առուտո՞ւր եկար ընես,  
թէ՞ իր շէմքին մարդ ըսպաննես...

Հա կ'ըսեն ու հա՛ կը զարնեն  
աղցան կ'ընեն, կ'երկնցնեն  
շան կուշտն ի՞վեր: «Հայտէ, առէք,  
ձեր մեռելը եկէ՛ք տարէ՛ք:»


5.

Ու հոնտեղէն բօթը ահա՛,  
կ'երթայ մօտիկ գիւղը կ'իյնայ  
թէ՛ «Մեռե՞ր էք,  
հասէ՛ք, եկէ՛ք,  
սպաննեցին  
մեր գիւղացին:»

Շնաճանճի բոյնը ինչպէս,  
երբ որ կ'աւրես ու կը թողնես,  
այդ ճանճին պէս,  
ամբողջ գիւղը կ'ելլէ ոտքի  
ու գունդ ու գունդ գուրս կը նետուի


ամէն մէկը առած բան մը  
որը ձեռքը հրացան մը,  
որը եղան, ցաքատ կամ սուր,  
որը թի, բահ, որը շամփուր,  
որը փայտով, կամ կացինով,  
որը ոտքով, որը ձիով,  
որն անգտակ, որը բոպիկ,  
հա՛յ, կը վագեն գիւղը մօտիկ:

— Ծօ՛, այսպէ՛ս այ անիրաւ գիւղ,  
ո՛չ խիղճ ունին, ո՛չ ան-երկիւղ.  
գացեր է մարդն առուտուրի,



հաւաքուեր են տըւեր սուրի:  
Թո՛ւ ձեր գիւղին, սովորութքին.  
Թու ձեր պատուին ձեր վարմունքին.  
երթա՛նք, երթա՛նք,  
ջա՛րդ ու փշուր  
կրակի տանք...  
«Հա՛յ, հո՛յ, առա՛ջ, ձեզի տեսնեմ...  
Ու դուրս եկան իրարու դէմ  
կոտորածի  
երկու գիւղերը դրացի:  
Տըւի՛ն, զարկին»

սպաննեցին  
 ու ինչքան շատ արիւն տեսան  
 ա՛յնքան աւել գազան դարձան  
 ջարդեցին իրար ,  
 ջնջեցին իրար ,  
 կորան ու եղան ,  
 գետնին հաւասար :



6.

Դուն մի՛ ըսեր , որ իրարու  
 սահմանակից մեր այս երկու  
 գիւղերը հարկ եղեր կու տան  
 ամէն մէկը զատ տէրութեան :  
 Մէկ տէրութեան թագաւորը ,  
 լսելուն պէս այս բոլորը ,  
 լուր կը զրկէ ասդին անդին

իր հպատակ ժողովուրդին .  
 «Յայտնի ըլլայ մեր տէրութեան  
 զինուոր , բանուոր , ազնուական  
 ամէն շարքին  
 ու աշխարհքին ,  
 որ անօրէն ու դաւաճան  
 մեր դրացի ազգը դաժան ,  
 երբ մենք նստած էինք սիրով ,  
 մեր սահմանը մտաւ զօրով




ու վատութեամբ քաշեց սուրի  
 դաւակները մեր սիրելի :  
 Եւ հակառակ մենք մեր կամքին ,  
 պատուէր տուինք մեր բանակին ,  
 թշնամիին մտնէ հողը ,  
 մեր սուրբ արդար հանէ ոխը . . .»

Իսկ անդին ալ միւս իշխանը  
 գրեց զօրքին ճի՛շտ նոյն բանը :  
 Մկսուեցաւ կռիւ անե՛ղ .  
 թնդանօթներ եկան մէջտեղ :  
 կրակն ինկաւ շէն ու քաղաք ,

արիւն , աւեր , ճիչ , աղաղակ ,  
ամէն կողմէ սարսափ ու բօթ ,  
ամէն կողմէ մեռելի հոտ...

Ամառ , ձմեռ այդպէս անցան ,  
ու մնացին դաշտերն անցան :  
Դեռ կռիւը չը դադարած ,  
սովը եկաւ համատարած ,  
սովը եկաւ , առժի հետ ցաւ ,  
ծաղկած երկիրն ամայացաւ...



## ՍԱՏԱՆԱՅԻՆ ԵՐԵՔ ՈՍԿԵՄԱԶԵՐԸ

ԿՐԻՄ ԵՂԲԱՅՐՆԵՐ

Ատենօք աղբատ կին մը կար : Օր մը այս կի-  
նը գաւակ մը ունեցաւ : Փոքրիկը բախտաւոր ծնած  
ըլլալով , գուշակեցին թէ նա՝ իր տասնևչորս տարե-  
կանին , թագաւորին աղջկան հետ պիտի ամուսնանայ :

Օր մը , այդ երկրին թագաւորը , ծպտուած՝ ան-  
ցաւ այդ գիւղէն : Գիւղացիներուն հարցուց , թէ նոր  
ի՞նչ կայ չկայ : Գեղջուկ մը պատասխանեց .

— Մեր գիւղին մէջ բախտաւոր տղայ մը ծը-  
նած է . կ'ըսուի թէ ան ինչ գործի որ ձեռնարկէ պի-  
տի յաջողի : Նոյնիսկ վհուկները գուշակած են , թէ նա ,  
իր տասնևչորս տարեկան հասակին մէջ , թագաւորին  
աղջկան հետ պիտի ամուսնանայ :

Թագաւորը , որ չարասիրտ մէկն էր , զայրացաւ  
այս գուշակութեան համար : Փնտուեց գտաւ նորածին

տղուն ծնողքը և կեղծ բարեկամութիւն ցոյց տալով ,  
ըսաւ .

— Ինձի տուէք ձեր տղան , ես գայն կը կրթեմ  
և մեծ հոգ կը տանիմ որ շնորհալի մէկը դառնայ :

Ծնողքը նախ մերժեց , բայց անձանօթին ու-  
կիներէն և շողքորթ լեզուէն համոզուեցաւ և տղան  
յանձնեց անոր : Թագաւոր տղան տուփի մը մէջ դը-  
րաւ , տարաւ խորունկ գետ մը նետեց և խոր շունչ մը  
քաշելով ըսաւ .

— Ազատեցի իմ աղջիկս այս անպիտան տղայէն :

Բայց տուփը գետնին յատակը չգնաց . փոքրիկ  
մակոյկի մը պէս սկսաւ ծփալ շուրթն երեսը : Հոսան-  
քը քշեց տարաւ գայն հեռու , մայրաքաղաքին շրջա-  
կայքը գտնուող ջրաղացի մը սահանքը , ուր կանգ ա-  
ռաւ : Ջաղացպանին աշխատաւորներէն մէկը նշմա-  
րեց գայն և կարծելով որ գանձ մը պահուած է անոր  
մէջ , աճապարեց և ափը քաշեց տուփը : Երբ բացաւ ,  
տեսաւ սիրուն փոքրիկ տղայ մը , արթուն և աշխուժ  
աչքերով : Աղօրեպանին տարաւ : Աղօրեպանը , որ գա-  
ւակ շունէր , շատ ուրախացաւ Աստուծոյ զրկած պար-  
գեէն և իր կնոջ հետ որոշեցին որդեգրել գայն և գա-  
ւակի պէս սիրեցին : Տղան կը մեծնար անվիշտ ու ան-  
հոգ և կ'ուրախացնէր իր նոր ծնողքը :

Տարիներ վերջ , անձրևոտ օր մը , թագաւորը ,  
որ անկէ կ'անցնէր , ջաղաց ապաստանեցաւ : Տղան ,  
որ 14 տարեկան եղած էր արդէն , մեծ եռանդով կ'աշ-  
խատէր ու կ'օգնէր իր ծնողաց :

— Այս աշխուժ ու աշխատասէր պատանին ձեր  
որդին է , հարցուց թագաւորը :

— Ո՛չ ,— պատասխանեց աղօրեպանը ,— ասկէ  
տասնևչորս տարի առաջ , մեր աշկերտը ջրաղացի սա-  
հանքին մէջ գտաւ գայն տուփի մը մէջ փակուած :  
Այր և կին գաւակ շունենալով շատ ուրախացանք և

շնորհակալ եղանք Աստուծոյ , որ շնորհալի մանկիկ մը  
զրկած էր ու գաւակ ըրինք մեզի :

Թագաւորը խոր մտածմունքի մէջ ինկաւ . «Ա-  
սիկա այն բախտաւոր տղան ըլլալու է անպատճառ ,  
զոր ես տուփի մը մէջ փակեցի ու գետը նետեցի» ը-  
սաւ ինքնիրեն : Ու անմիջապէս դառնալով աղօրեպա-  
նին , յարեց .

— Ազնիւ պարոն , կը թոյլատրէ՞ք արդեօք , որ  
այս կտրիճ պատանին իմ մէկ նամակս թագուհիին տա-  
նի : Երկու ոսկի կու տամ իրեն իր յոգնութեան փո-  
խարէն :

— Ինչպէս որ կը հրամայէ Ձեր վեհափառութիւ-  
նը , պատասխանեց աղօրեպանը :

Թագաւորը թագուհիին նամակ մը գրեց , որուն  
մէջ կ'ըսէր .— «Անմիջապէս որ գրաբեր երիտասարդը  
հոտ հասնի , սպաննել և թաղել տուր . այս հրամանս  
պէտք է գործդարուի վերադարձէ՞ս առաջ» :

Պատանին առաւ նամակը և ինկաւ ճամբայ :  
Իրիկուան մօտ իր ուղղութիւնը կորսնցուց և ինկաւ  
անտառ մը : Ստուերներուն մէջէն լուսաւոր կէտ մը  
նշմարեց , մօտեցաւ լոյսին և տնակի մը դրան առջև  
կանգ առաւ : Ներս մտաւ և տեսաւ պառաւ կին մը  
առանձին , կրակին մօտ նստած : Պառաւը տղան տես-  
նելուն պէս , սարսափահար ըսաւ .

— Այ տղայ , ուրկէ՞ կու գաս և ո՞ւր կ'երթաս :

— Ջրաղացէն կու գամ , պատասխանեց ան , և  
թագուհիին մօտ կ'երթամ , որուն պիտի յանձնեմ այս  
նամակը . բայց անտառին մէջ ճամբաս կորսնցուցի :  
Այս գիշեր կ'ուզեմ հոս անցնել :

— Խեղճ տղայ , աւագակներուն որջն ես ին-  
կեր . իրենց վերադարձին եթէ քեզի հոս գտնեն , ան-  
պատճառ կը սպաննեն :

— Ինչ որ ալ պատահի , յարեց պատանին , բա-

նէ մը չեմ վախնար . ասկէ պատ այնքան յոգնած եմ որ քալել չեմ կրնար :

Նստարանի մը վրայ երկարեցաւ ու քնացաւ : Քիչ վերջը աւազակները եկան ու բարկութեամբ հարցուցին , թէ ո՞վ էր այդ երիտասարդը որ նստարանին վրայ կը քնանար :

— Խեղճ պատիկ մըն է , պատասխանեց պառաւը . անտառին մէջ մոլորելով հոս եկած էր . զթացի վրան և ներս առի : Ան պաշտօն ունի թագուհիին նամակ մը տանելու :

Աւազակները կնիքը զգուշութեամբ քակեցին և նամակը կարդացին : Պարունակութիւնը զայրոյթ պատճառեց բոլորին : Տղուն անմեղ դէմքը և մատաղ հասակը անոնց գութը շարժեց : Աւազակապետը պատուեց նամակը և ուրիշ մը գրեց : Կը հրամայէր պատանին հասնելուն պէս ամուսնացնել թագաւորին աղջկան հետ : Չգեցին որ քնանայ . առտուն երբ արթնցաւ , նամակը յանձնեցին անոր և ցոյց տուին պալատ տանող ամենակարճ ճամբան :

Թագուհին նամակը ստանալուն պէս , փութաց հրամանը իսկոյն գործադրել : Հարսանեկան փառաւոր հանդէս մը կազմակերպեց և թագաւորին աղջիկը ամուսնացուց բախտաւոր տղուն հետ :

Թագաւորին գեղանի և սիրուն աղջիկը շատ գոհ մնաց անոր հետ ամուսնանալէն :

\* \* \*

Քանի մը օր վերջը թագաւորը վերադարձաւ և տեսաւ որ վհուկին գուշակութիւնը կատարուեր էր , բախտաւոր տղան ամուսնացած էր իր աղջկան հետ :

— Ի՞նչպէս կը համարձակիք իմ հրամանս չըկատարել , աղաղակեց թագաւորը զայրացած :

Թագուհին նամակը ցոյց տուաւ : Թագաւորը

զայրոյթով լի նշմարեց որ իր նամակը փոխուած էր : Կանչեց երիտասարդը և բացատրութիւն պահանջեց :

— Բացարձակապէս տեղեկութիւն չունիմ , պատասխանեց տղան . կ'երևի թէ անտառին մէջ քնացած ատենս փոխուած է ան : Ու պատմեց իր գլխուն եկածը :

— Ասիկա այսպէս չի կրնար ըլլալ , ըսաւ թագաւորը բարկութեամբ . ան որ կ'ուզէ իմ աղջկանս հետ ամուսնանալ , պարտաւոր է դժոխք երթալ և ստանային գլխէն երեք ոսկեմազ բերել : Եթէ կրնաս բերել , այն ատեն կը տիրանաս իմ աղջկանս :

Թագաւորը կը յուսար այսպէսով անոր հետքը կորսնցնել , բայց տղան պատասխանեց .

— Կը բերեմ երեք ոսկեմազերը , որովհետև ստանայէն չեմ վախնար :

Արձակուրդ առաւ թագաւորէն ու ճամբայ ինկաւ : Հասաւ մեծ քաղաք մը , սրուն դրան պահակը կեցուց զայն և հարցուց .

— Ի՞նչ արհեստ ունիս , և ի՞նչ կրնաս ընել :

— Ամէն բան , — ըսաւ երիտասարդը :

— Ուրեմն կրնա՞ս մեզի ծառայութիւն մը մատուցանել . ըսէ տեսնեմ , թէ ինչո՞ւ մեր շուկայի աղբիւրը , ուրկէ գինի կը հոսէր , ցամքած է հիմա և շուր անգամ չի հոսիր :

— Չեղի պիտի բացատրեմ յետոյ , ըսաւ տղան , սպասեցէք մինչև վերադարձս : Ու շարունակեց իր ճամբան . հասաւ ուրիշ քաղաք մը , հոն ևս պահակը կեցուց զայն և հարցուց .

— Ի՞նչ գործ կ'ընես , ի՞նչ գիտես :

— Ամէն բան , — ըսաւ ան :

— Ուրեմն կրնա՞ս ըսել մեզի թէ ինչո՞ւ մեր քաղաքի շատ մը ծառերը , որոնք ոսկի ինձոր կուտային , այժմ տերևէ անգամ զրկուած են :

— Պիտի գիտնաք իսկոյն , ըսաւ ան , միայն սպասեցէք իմ վերադարձիս :

Շարունակեց իր ճամբան և հասաւ մեծ գետի մը եզերքը. պէտք էր միւս ափը անցնիլ: Մակոյկավարը կեցուց զայն և հարցուց.

— Ինչո՞վ կը զբաղիս, ի՞նչ գիտես.

— Ամէն բան,— ըսաւ ան:

— Լաւ, ուրեմն բարի եղիր ինձի ըսելու թէ մինչև ե՞րբ այսպէս պիտի երթամ ու գամ. ո՞վ պիտի ապատէ վիս այս տաղտկալի կեանքէն:

— Վերադարձիս սպասէ և պիտի ըսեմ քեզի, յայտնեց երիտասարդը:

Միւս ափը անցնելով, գտաւ զժողովրդի մուտքը: Մուտք և մրոտ էր ան: Սատանան հոն չէր. միայն իր հիւրընկալը կար, որ բաղմած էր լայն թիկնաթողի մը վրայ:

— Ի՞նչ կ'ուզես,— հարցուց հիւրընկալը պաղարեամբ:

— Սատանային գլխէն երեք ոսկեմազեր կուզեմ,— ըսաւ տղան, առանց անոնց չեմ կրնար կինս պահել:

— Անկարելին կը պահանջես,— ըսաւ հիւրընկալը,— եթէ սատանան վերադարձին հոս գտնէ քեզ, կրնայ կեանքդ մահուան փոխել, բայց դուն զիս կը հետաքրքրես, ուստի պիտի փորձեմ օգտակար ըլլալ քեզի:

Եւ մըջիւնի մը վերածեց զայն ու ըսաւ անոր.

— Հագուստիս ծալքին մէջ պահուրտէ, հոն ապահով կրնաս ըլլալ:

— Հիանալի է,— պատասխանեց տղան,— սակայն ուրիշ երեք խնդրանք ևս ունիմ: Աղբիւր մը, ուրկէ ատենօք գինի կը հոսէր, ինչո՞ւ հիմա ցամքած է և ջուր անգամ չի տար. ծառ մը որ ատենօք ոսկեխնձոր կու տար, ինչո՞ւ չորցած ու տերևներէն զրկուած է. մակոյկավար մը ինչո՞ւ ստիպուած է միշտ

երթեկեկել. ո՞վ պիտի ապատէ զայն իր տաղտկալի կեանքէն:

— Դժուար հարցեր են ատոնք, ըսաւ հիւրընկալը, բայց հանգիստ կեցիր դուն և ուշադիր եղիր թէ ի՞նչ կ'ըսէ սատանան երբ իր գլխէն երեք ոսկեմազ քաշեմ:

Իրիկուան սատանան իր տունը եկաւ: Ան անմիջապէս հասկցաւ որ անսովոր հոտ մը կու գայ:

— Մարդկային մտի հոտ կ'առնեմ, ըսաւ, հոս բան մը կը կատարուի:

Բոլոր անկիւնները պրպտեց, բայց բան մը չը գտաւ:

Հիւրընկալը սկսաւ խնդալ ու ըսաւ.

— Նոր աւելցի ամէն կողմ, և կարգի դրի ամէն ինչ. եկար ու տակնուվրայ ըրիր դարձեալ: Միշտ մարդու հոտ կ'առնես, ի՞նչ անհոգի ես եղեր: Նստէ՛ կերակուրդ կեր:

Երբ ճաշեց ու խմեց, յոգնած զգաց ինքզինքը գլուխը հիւրընկալին ծունկին դրաւ և խոր քուն մը տաւ: Պառաւր ոսկի մազ մը բռնեց և քաշեց ու իր քովը դրաւ:

— Է՛յ,— պոռաց սատանան,— ի՞նչ կ'ընես:

— Գէշ երազ մը տեսայ,— ըսաւ հիւրընկալը, ատոր համար մազէդ քաշեցի:

— Ի՞նչ երազեցիր,— հարցուց սատանան:

— Երազեցի որ շուկային աղբիւրը, ուրկէ սովորաբար գինի կը հոսէր, ցամքած է և ջուր անգամ չի վազէր. ի՞նչ կրնայ ըլլալ ատոր պատճառը:

— Ա՛հ, եթէ գիտնային, պատասխանեց սատանան, գորտ մը կայ աղբիւրին քարին տակ. թող սատկեցնեն զայն և գինին պիտի հոսի առաջուան պէս:

Հիւրընկալը սկսաւ շոյել սատանային գլուխը. պահ մը անցած՝ ան նորէն խոր խոր կը քնանար:

Պառաւր մազ մը ևս քաշեց:

— Ի՞նչ կ'ընես, — ճշաց սատանան, — սատանիկ վայրացած :

— Մի՛ բարկանար, — ըսաւ կինը, — երազ տեսայ :

— Նորէն ի՞նչ երազեցիր, հարցուց սատանան :

— Երազեցի որ քաղաքի մը մէջ ծառ մը կար, որ ոսկի խնձոր կու տար, այժմ՝ չորցած և տերևներէ զրկուած է. ինչո՞ւ արդեօք :

— Ա՛հ, եթէ գիտնային, պատասխանեց սատանան. մուկ մը կայ որ անոր արմատները կը կրծէ. եթէ սատկեցնեն զայն, ծառը նորէն ոսկի խնձորներ պիտի տայ : Ա՛յ հանգիստ ձգէ զիս, եթէ ոչ՝ կ'ապտակեմ :

Հիւրընկալը կրկին շոյեց անոր գլուխը և սատանան խոկալ սկսաւ : Քիչ ետքը պառաւը Երրորդ ոսկի մազը քաշեց :

Սատանան ընդոստ վեր ցատկեց, ուզեց ապտակել պառաւը, բայց ան հանդարտեցուց զայն եւ ըսաւ .

— Սա անպիտան երազներէն ե՞րբ պիտի ազատիմ արդեօք :

— Ի՞նչ երազներ նորէն, — հարցուց հետաքրքրութեամբ :

— Երազեցի մակոյկավար մը, որ կը գանգատէր թէ ինչո՞ւ ստիպուած է գետին մէկ եզերքէն միւսը երթալ անդադար, առանց փոխանորդուելու :

— Ա՛յ, այդ յիմարը, ըսաւ սատանան, առաջին անցորդը որ կու գայ գետը անցնելու, թող իր թին անոր տայ ու ազատի իր տաղտկալի կեանքէն : Միւսը պիտի ստիպուի նաւավար դառնալ :

Հիւրընկալը երեք ոսկեմագերը քաշած և երեք պատասխանները առած ըլլալով՝ հանգիստ ձգեց ծերուկ սատանան, որ քնացաւ մինչև առաւօտ :

Առտուն, սատանան մեկնելուն պէս, պառաւը առաւ մըջիւնը իր հագուստին ծալքերուն մէջէն և մարդկային կերպարանք տուաւ անոր : —

— Ահա երեք ոսկեմագերը, ըսաւ անոր, լալսեցի՞ր երեք պատասխանները, որ սատանան տրուաւ հարցումներուդ :

— Լսեցի, և միտքս պիտի պահեմ, ըսաւ տղան :

— Դուն ուրեմն վտանգէ զերծ ես, կրնաս ճամբադ շարունակել :

Երիտասարդը մեծապէս շնորհակալ եղաւ ու ձգեց դժոխքը՝ խիստ գոհ որ ամէն ինչ շատ յաջող անցաւ :

Երբ գիծը հասաւ, մակոյկավարը ուզեց հասկնալ խոստացուած պատասխանը .

— Չիս միւս ափը անցուր նախ, յետոյ կ'ըսեմ հարկ եղածը :

Երբ միւս ափը հասաւ, սատանային պատասխանը հաղորդեց անոր .

— Առաջին մարդը որ քեզմէ խնդրէ գետին միւս ափը անցնիլ, թիզ անոր ձեռքը տուր :

Շարունակեց իր ճամբան և հասաւ երկրորդ քաղաքը, ուր կը գտնուէր անպտուղ ծառը, տեսաւ պահակը և ըսաւ .

— Սպաննեցէք մուկը որ արմատները կը կրծէ և ծառը նորէն ոսկեխնձորներ պիտի տայ :

Պահակը շնորհակալ եղաւ և երկու ջորիի բեռ ոսկի տուաւ անոր :

Հասաւ առաջին քաղաքը և ըսաւ պահակին .

— Աղբիւրին գուռին մէջ, քարի մը տակ գորտ մը կայ, սատկեցուցէք զայն և աղբիւրէն դարձեալ գինի պիտի հոսի :

Պահակը շնորհակալ եղաւ և երկու ձիու բեռ ոսկի տուաւ անոր :

Բախտաւոր տղան վերջապէս հասաւ իր կնոջ

# „ՄԱՍԻՍ“ Ի

ԱՐՏԱՍՍԱՀՄԱՆԻ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա. ԱՐՏԱՍՍԱՀՄԱՆԻ ԸՆԴՀ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ՝

«ՎԷՄ», 13 Rue des Platanes Plessis Robinson Seine, Paris

## ԱՆՈՐ ԵՆԹԱԿԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1) ԵԴՈՎՊԻԱ՝ Պ. Թիրիքեան Hirna
- 2) ՊԱՂԵՍՏԻՆ՝ » Վ. Կէտիկեան Ierusalem, Haret el Nsare
- 3) ԻՐԱԿ՝ » Մ. Սոսսոյեան Baghdad, South gate, Bataveen 27/1
- 4) ԱԲԱԴԱՆ՝ » Ա. Գալոբեան P. O. Box 22
- 5) ԹՍԻՐԻՉ՝ » Խ. Մելքումեան
- 6) ՆՈՐ ԶՈՒՂԱ՝ » Թ. Թաղէոսեան (Ecole Arménienne)
- 7) ԹԷՀՐԱՆ՝ » Ե. Իշխանեան Red. „Alik“
- 8) ԴԱՄՈՍԿՈՍ՝ » Ս. Պոյաճեան B. P. 321
- 9) ԳԱՀԻՐԷ՝ » Գ. Մխիթարեան B. P. 868
- 10) ՀԱԼԷՊ՝ » Թ. Կոնդայեան Hamam-el-Telle
- 11) ՄԱՐՍԷՅԼ՝ » Ե. Կապոսեան Rue Nationale, No. 49
- 12) ՓԱՐԻՉ՝ „ՎԷՄ“
- 13) ՊՈՒ. ԱՅՐԷՍ՝ „ԱՐՄԷՆԻԱ“ Canning, 1087

## Բ. ԲԱՍՆԱԻՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1) ՍՕՅԻԱ՝ Պ. Գ. Հալաճեան B. P. 444
- 2) ՌՈՒՍՃՈՒԿ՝ » Օն. Զարմուշի Ecoles Armeniennes
- 3) ՊՈՒՐԿԱԶ՝ » Մ. Թովմասեան Bul. Ferdinandova, No. 3
- 4) ՓԼՈՎՏԻՎ՝ » ՄԿ. Կարապետեան

## Գ. ՅՈՒՆԱՍՏԱՆ

- 1) ԱԹԷՆՔ՝ „Նոր Օր“ 20 A. Rue Vouli
- 2) ՍԵԼԱՆԵԿ՝ „Նորիզոն“ Rue Franguini, 2

## Դ. ՀԻԻՍ. ԱՄԵՐԻԿԱ

- 1) ՊՈՍՏՈՆ՝ „Հայրենիք“ 13—15 Shawmut St.